««Մաքսային միության մաքսային սահմանին եւ Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողություն իրականացնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթում փոփոխություն կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 84 որոշում

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի 3-րդ հոդվածին, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային կանոնակարգին եւ «Անասնաբուժասանիտարական միջոցների վերաբերյալ» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրի 7-րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը ՈՐՈՇԵՑ.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 317 որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության մաքսային սահմանին եւ Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողություն իրականացնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթի 3.8 կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նախադասությամբ՝ «Այդ անասնաբուժական սերտիֆիկատների ձեւաթղթերը պատրաստվում են այնպիսի եղանակով, որ դրանց կեղծման հնարավորությունը հասցվի նվազագույնի (հատուկ թղթի, ջրանշանների օգտագործում, տպագրական համարի առկայություն եւ պաշտպանության այլ միջոցներ)։»:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիսը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Ս. Ռումաս	**Բ. Սագինտաեւ**	**Ի. Շուվալով**